ԼՍԵԼ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼ

ԳՈՐԾ. 11:1-18

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

1 Եւ առաքեալները և այն եղբայրները՝ որ Հրէաստանի կողմերումն էին, լսեցին որ հեթանոսներն էլ ընդունեցին Աստուծոյ խօսքը: 2 Բայց երբոր Պետրոսը վեր ելավ Երուսաղէմ, այն հավատացեալները, որ թլփատությունից էին վիճում էին նորա դէմ, 3 Եւ ասում էին, թէ Դու անթլփատ մարդկանց մօտ մտար, և նորանց հետ կերար:
4 Եւ Պետրոսը սկսեց կարգով պատմել նորանց՝ և ասեց. 5 Ես Հոպպէ քաղաքում աղօթք էի անում՝ և մտքի հափշտակության մէջ տեսիլք տեսա, որ մեծ կտավի պէս մի անօթ՝ չորս ծայրից կախված՝ երկնքից վայր էր գալիս, և եկավ մինչև ինձ մօտ:
6 Երբոր աչքս նորա մէջ գցած նայում էի, և տեսա երկրի չորքոտանիները, և գազանները, և սողունները, և երկնքի թռչունները. 7 Եւ ձայն լսեցի, որ ասում էր ինձ. Վեր կաց Պետրոս, մորթիր և կեր: 8 Եւ ասեցի. Քավ լիցի, Տէր. Որովհետև մինչև հիմա չի պատահել, որ պիղծ կամ անմաքուր մի բան մտնի իմ բերանը: 9 Ձայնը երկնքից ինձ երկրորդ անգամ պատասխանեց. ***Այն որ Աստուած սրբեց, դու պիղծ մի համարիր:*** *10 Եւ այս երեք անգամ եղավ, և բոլորը դարձեալ վերացավ երկինք: 11 Եւ ահա շուտով երեք մարդիկ եկան կանգնեցին այն տան առաջին, ուր որ ես էի. Կեսարիայից ինձ մօտ ուղարկուած: 12* ***Եւ Հոգին ինձ ասեց,*** *որ նորանց հետ գնամ՝ առանց խղճմտանք անելու. այս* **վեց** *եղբայրներն էլ ինձ հետ եկան, և մտանք այն մարդու տունը: 13 Եւ պատմեց մեզ, թէ ինչպէս տեսավ հրեշտակն իր տանը, որ կանգնած էր՝ և ասում էր նորան. Ուղարկիր Հոպպէ, և կանչիր Պետրոս կոչուած Սիմօնին. 14 Նա քեզ հետ բաներ կ'խօսի, որ նորանով կ'փրկվես դու՝ և քո բոլոր տունը: 15 Եւ երբոր սկսեցի խօսել,* ***Սուրբ Հոգին իջավ*** *նորանց վրա ինչպէս և մեզ վրա սկզբում: 16 Եւ ես հիշեցի Տիրոջ այն խօսքը՝ որ ասում էր. Հովհաննէսը ջրով մկրտեց. բայց դուք Սուրբ Հոգով կ'մկրտվեք: 17* ***Ուրեմն՝ եթէ Աստուած միևնույն պարգևը տվել էր մեզ, նրանց ևս տվեց, երբ Տէր Հիսուս Քրիստոսին հավատացին, ապա ես ինչպե՞ս կարող էի արգելելք լինել Աստուծուն:*** *18 Եւ երբոր լսեցին այս բաները, լռեցին և փառավորում էին Աստուծուն՝ և ասում էին. Ուրեմն Աստուած հեթանոսներին ևս առիթ տվեց որ ապաշխարհեն և կյանք ունենան:*

I. Սուրբ Հոգին խոսում է:

*12 Եւ **Հոգին ինձ ասեց,** որ նորանց հետ գնամ՝ առանց խղճմտանք անելու.*

Այսօր մենք կկենտրոնանաք երկու կետերի շուրջ.

1. Խոսքը ստանալու և խոսքով առաջնորդվելու մասին:

- ***Նա հաղորդակցում է մեզ ամեն բան անմիջապես Հոր կամքից***

Հով. 16:13 - *13 Բայց երբոր նա՝ ճշմարտության Հոգին (խոսքի հեղինակը) կգա, նա կառաջնորդի ձեզ ամեն ճշմարտության մէջ. որովհետև իր անձից չի **խօսի**, այլ ինչ որ կլսէ՝ **կխօսի**, և գալու բաները կպատմէ ձեզ:*

➡ ***(Խոսքը)*** *Գործ. **8:29 -** 29 **Հոգին** էլ Փիլիպպոսին **ասեց**. Մօտեցիր և հասիր այդ կառքին:*

Գործ. 13:2 - *2 Սորանք երբոր Տիրոջը պաշտօն էին մատուցանում և ծոմ էին պահում, **Սուրբ Հոգին ասեց.** Ինձ համար որոշեցէք Բառնաբասին և Սօղոսին այն գործի համար, որ ես դորանց կանչել եմ:*

➡ ***(Առաջնորդությունը)*** *Գործ. **16:6-7 -** 6 Պողոսը, Շիղան և Տիմոթեոսը շրջեցին Փռյուգիայի և Գաղատիայի կողմերում, բայց **Սուրբ Հոգին թույլ չտվեց** որ Ասիայի մէջ քարոզեն Տիրոջ խօսքը: 7 Երբոր եկան Մյուսիայի կողմերը, ջանք էին անում որ գնան դէպի Բյութանիա, և **Հիսուսի Հոգին թույլ չ'տվեց** նորանց:*

Գործ. 20:23 - *22 Այժմ ահա **Սուրբ Հոգու մղումով** գնում եմ Երուսաղեմ: Չգիտեմ, թե այնտեղ ինչ կպատահի ինձ: 23 Գիտեմ միայն, որ ամեն մի քաղաքում **Սուրբ Հոգին ազդարարում է ինձ ասելով,** որ ինձ սպասում են բանտարկություն ու նեղություն:*

II. Սուրբ Հոգին առաջնորդում է:

Օրինակ: Ինչպես ծնողը իր երեխային:

Եր. 7:23 - *23 Այլ այս բանը պատուիրեցի նորանց ասելով. **Լսեցէք իմ ձայնը,** և ես ձեզ Աստուած կ'լինեմ, և դուք ինձ համար կ'լինէք ժողովուրդ, և **գնացէք այն բոլոր ճանապարհում,** որ ձեզ պատուիրում եմ, որպէս զի ձեզ համար բարի լինի:*

Իմ Ոչխարները ճանաչում են իմ ձայնը, հետևում են և ես առաջնորդվում եմ:

Հռ. 8:14 - 14 Աստծու որդիները նրանք են, որոնք առաջնորդվում են Աստծու Հոգով:

Գաղ. 5:16 - 16 Բայց ասում եմ. Հոգով գնացէք, և մարմնի ցանկությունը չէք կատարի:

- ***Ինչպե՞ս կարող ենք զանազանել Աստծո ձայնը և առաջնորդվել Նրա Հոգով:***
  (Պետք է հետևվենք Պետրոսի օրինակին)

1. Աղոթքի ժամանակ

1 Թես. 5:17 - 17 Անդադար աղօթք արէք:

*5 Ես Հոպպէ քաղաքում **աղօթք էի** անում՝ և մտքի հափշտակության մէջ տեսիլք տեսա. (3 անգամ մտքի նորոգությամբ)*

Մեր միտքը կարող է օգտագործվել թե սատանայի և թե Աստծու կողմից:

2. Մտքի նորոգությամբ - Աստծու խոսքի միջոցով: (Անկեղծ աղոթք)

7 Եւ ձայն լսեցի, որ ասում էր ինձ. Վեր կաց Պետրոս, մորթիր և կեր:
*8 Եւ ասեցի. Քաւ լիցի, Տէր. Որովհետև մինչև հիմա չի պատահել, որ պիղծ կամ անմաքուր մի բան մտնի իմ բերանը: 9 **Ձայնը երկնքից ինձ երկրորդ անգամ պատասխանեց.** Այն որ Աստուած սրբեց, դու պիղծ մի համարիր: 10 Եւ այս **երեք անգամ** եղավ, և բոլորը դարձեալ վերացավ երկինք:*

3. Աստծո Հոգին օգնում է մեզ զանազանել մարմնավորը հոգևորից:

*12 **Եւ Հոգին ինձ ասեց,** որ նորանց հետ գնամ՝ առանց **խղճմտանք** անելու.*
***1 Կոր. 2:9-16** – 9 Սակայն ինչպես գրված է. Աստված իրեն սիրողների համար պատրաստեց այնպեսի մի փառք, որ ոչ մի աչք չի տեսել, ոչ մի ականջ չ լսել, և ոչ մեկի մտքով իսկ չի անցել:*

*10 **Բայց** Աստված **մեզ** հայտնեց այդ խորհուրդները իր **Հոգու միջոցով,** որովհետև Հոգին, որ ամեն ինչ քննում է, գիտի Աստծու նույնիսկ ամենածածուկ ծրագրերը: (Մարդը միայն կարող է հաստատել այն ինչ որ Աստված արդեն ասել է):*

11 Մարդկանցից ո՞վ կարող է ճանաչել մարդու խորհուրդները, եթե ոչ նույն ինքը մարդու հոգին, որ նրա մեջ է: Նույնպես և ոչ ոք չի կարող իմանալ Աստծու խորհուրդները, եթե ոչ Աստծու Հոգին: 12 Արդ, մենք ոչ թե աշխարհի հոգին առանք, այլ Աստծուց ուղարկված Հոգին, որպեսզի ճանաչենք Աստծուց մեզ

շնորհված հոգևոր պարգևները: 13 Եվ ինչ որ խոսում ենք, դրանք մարդկային իմաստությամբ արտասանված խոսքեր չեն, այլ Սուրբ Հոգու կողմից իմաստությամբ ուսուցանված հոգևոր ճշմարտություններ ենք բացատրում հոգևոր մարդկանց: 14 Աստծու Հոգին չունեցող մարդը չի ընդունում Աստծու Հոգու բերած ճշմարտությունները, որովհետև դրանք հիմարություն են թվում նրան, և չի կարող ճանաչել, որովհետև դրանք միայն Հոգով են քննվում: 15 Իսկ Աստծու Հոգին ունեցող մարդը քննում է ամեն ինչ, բայց ինքը ոչ մեկից չի քննվում: 16 Ահա թե ինչու Սուրբ գիրքն ասում է. Ով կարողացավ երբևէ կարդալ Տիրոջ միտքը, որ կարողանա խորհուրդ տալ նրան: Բայց մենք գիտենք թե Քրիստոսը ինչ է մտածում:

Աստծո Հոգին (1 Կոր 3:16); Քրիստոսի Հոգին (Հռով. 8:9); կյանքի Հոգին (Հռոմ. 8:2); ճշմարտության Հոգին (Յովհաննէս 16:3); շնորհքի Հոգին (Եբր. 10-29); սրբության Հոգին (Rom.1:4); և խոստման Հոգին (Եփե.1:13):